



Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 01-08-2021 - 31-08-2021թթ. տվյալների ամփոփում

Հաշտարարի գրասենյակը 01-08-2021 - 31-08-2021թթ. ընթացքում ստացել է ընդհանուր քանակությամբ 1,322 բողոք, որից՝ ֆինանսական կազմակերպություններին վերաբերող բողոքները 1,253-ն են:

Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող 1,253 բողոքներից 93-ը համաձայն «Ֆինանսական համակարգի Հաշտարարի» մասին ՀՀ օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վճիռ, դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից քննվում է հաճախորդի և Կազմակերպության միջև նույն պահանջի առարկայի վերաբերյալ գործ, պահանջը չի ներկայացվել Օրենքով սահմանված ժամկետներում, Կազմակերպության լիցենզիայի գործողությունը դադարեցվել է և այլն):

Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասի դեպքում հաճախորդները նախապես դիմած չեն եղել ֆինանսական կազմակերպություններին. նման դեպքերում Գրասենյակի աշխատակիցները հաճախորդներին օգնել են գրել բողոք-պահանջներ: Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասն էլ բավարարվում են կազմակերպությունների կողմից՝ բողոք-պահանջների հիման վրա՝ առանց Գրասենյակ պահանջ-դիմում մուտք անելու. լինում են նաև բողոքներ, որոնց նախնական ուսումնասիրությունից հետո Հաճախորդին խորհուրդ է տրվում պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում է Հաճախորդի՝ որպես սպառողի շահերի ոտնահարման փաստը:

01-08-2021 - 31-08-2021թթ. Հաշտարարի գրասենյակը քննության է ընդունել 472 պահանջ-դիմում:

| | |
|---|--------------|
| Գրասենյակ ներկայացրած բողոքների քանակ (հատ), որից՝ | 1,322 |
| Վերաբերում են ֆինանսական համակարգին՝ | 1,253 |
| 1. Ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից | 93 |
| 2. Ենթակա են քննության Հաշտարարի կողմից | 1,160 |
| 2.1 Ընդունվել են քննության, ուղղված են՝ | 472 |
| 2.1. 1. Բանկերի դեմ, կապված են՝ | 119 |

| | |
|---|------------|
| • Վարկային գործարքների հետ | 109 |
| • Ավանդային գործարքների հետ | 3 |
| • Վճարահաշվարկային գործարքների հետ | 7 |
| 2.1. 2. Ապահովագրական ընկերությունների դեմ, կապված են՝ | 344 |
| • Մեքենայի ԿԱՄԿՈ ապահովագրության հետ | 2 |
| • Առողջության ապահովագրության հետ | 7 |
| • Գույքի ապահովագրության հետ | 1 |
| • Գյուղատնտեսության ապահովագրության հետ | 9 |
| • ԱՊՊԱ-ի հետ (ներառյալ՝ Բյուրո) | 325 |
| 2.1. 3. Վարկային կազմակերպությունների դեմ | 8 |
| 2.1.4. Դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների դեմ | 1 |

| | |
|---|------------|
| Քննության ընդունված պահանջների ելքեր (հատ դեպք)՝ [1] | 563 |
| Պահանջը բավարարվել է հաշտեցման միջոցով | 220 |
| Պահանջը մասնակի է բավարարվել | 35 |
| Պահանջը բավարարվել է | 4 |
| Պահանջը մերժվել է | 245 |
| Պահանջի քննությունը դադարեցվել է | 47 |
| Պահանջի քննությունը մերժվել է | 12 |

Հաշտարարի գրասենյակ կարելի է դիմել՝ զանգահարելով (374) 60-70-11-11 հեռախոսահամարով կամ այցելելով Մ. Խորենացու փող., 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ: E-mail: info@fsm.am . Web: www.fsm.am

1 Հաշվետու ժամանակաշրջանում հանգուցալուծված պահանջ-դիմումների ելքեր